ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը
Անկախության տոնի առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ, շնորհավորում եմ Հայոց պատմության կարեւորագույն իրադարձության՝ Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առթիվ:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանի ժողովուրդը ապագայի հանդեպ մեծագույն հավատով, սեփական ճակատագիրը տնօրինելու վճռականությամբ միասնաբար քվեարկեց անկախ պետություն ստեղծելու օգտին: 24 տարի առաջ կատարված գիտակցված ընտրությամբ ընդունեցինք սերունդների համար խիստ պատասխանատու որոշում՝ աշխարհին ապացուցելով ազատ ու անկախ ապրելու, սեփական ճակատագիրը տնօրինելու մեր ժողովրդի իրավունքը, դարերից եկող մեր երազանքներն իրականություն դարձնելու հաստատակամությունը:

Այսօր մենք հպարտությամբ նշում ենք, որ դժվարությամբ, պատերազմի ու մաքառումների գնով ձեռք բերված անկախությունն այն ամենակարևոր նվաճումն է, որ ունեցել է մեր երկիրն իր պատմության անցած ճանապարհին:

Անկախության տարիներին կյանքի բոլոր ոլորտներում մեր պետությունն իրականացրել է աննախադեպ բարեփոխումներ՝ իր նկատելի տեղը զբաղեցնելով համաշխարհային մեծ ընտանիքում: Երկրի նախագահ Սերժ Սարգսյանի եւ կառավարության հետեւողականության ներքո այսուհետ ևս իրականացնելու ենք քայլեր՝ ուղղված մեր անկախ հայրենիքի հետագա հզորացման, հայ ժողովրդի բարեկեցության ապահովմանը:

Կրկին շնորհավորում եմ հայ ժողովրդին՝ Անկախության տոնի առթիվ: Թո՛ղ խաղաղ ու անսասան լինեն մեր հայրենքի սահմանները, թո՛ղ որ իրականանան մեր ժողովրդի բոլոր նվիրական երազանքները: Անսահման բարիք, հաջողություններ, երջանիկ եւ լուսավոր ապագա: